



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 14

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2021 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2021 – 2022 ուստարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների ընթացքը ֆակուլտետում:
2. Ֆակուլտետում ուսանող հեռակա ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորում:
3. Մույն թվականի նոյեմբերի 3 – ից հեռավար ուսուցման անցնելու հետ կապված խնդիրների քննարկում:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 19-ը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ ֆակուլտետի ղեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ սահմանված կարգի համաձայն՝ ընթացիկ քննությունները անցկացվում են առկա ձևաչափով: Դասախոսներին և ուսանողներին հրահանգված է

պահպանել անվտանգության կանոնները: Քննությունները արդեն մեկնարկել են, և հույս ունեն, որ ամեն ինչ կանցնի բնականոն հունով:

Ելույթ ունեցողները հույս հայտնեցին, որ հաջորդ քննաշրջանին նմանատիպ իրավիճակներ չեն լինի և ընթացիկ ու ավարտական քննությունները հնարավոր կլինի անցկացնել առավել արդյունավետ:

Օրակարգի 2 - րդ՝ հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստացիայի առիթով առանձին - առանձին ներս հրավիրվեցին համապատասխան ամբիոնների հեռակա ուսուցման ասպիրանտներն ու հայցորդները: Վերջիններս ներկայացրին հաշվետու ժամանակահատվածում իրենց կատարած աշխատանքները: Գիտխորհրդի անդամները մասնավորապես՝

ԼՄԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (հեռակա ուսուցում) Սարին Ագպաշ Բուզանդի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Մ. Ֆելեքյանը, Թ. Տոնոյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Սարին Ագպաշը 2018 թ. ավարտել է պատմության ֆակուլտետի սիյուոքագիտության ամբիոնի մագիստրատուրան <<Հայագիտություն>> մասնագիտացմամբ, 2019 թ. հանձնել է ընդունելության քննությունները և ընդունվել ասպիրանտուրա (հեռակա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Ատենախոսության թեմա է հաստատվել <<Արդի արևմտահայերենի կանոնարկման հիմնախնդիրները>> (Ժ.02.01 «Հայոց լեզու»), ղեկավար՝ պ.գ.դ., դոց.

Հակոբ Զոլաքյան: Սարին Ագպաշը 2019 – 2020 ուստարում ավարտել է <<Գիտության փիլիսոփայություն>>, <<Մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն)>>, <<Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ>>, <<Մանկավարժություն և հոգեբանություն>> պարտադիր, <<Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում>>, <<Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում>> ընտրովի դասընթացները և ստացել է համապատասխան կրեդիտներ: Տպագրության է հանձնել երկու հոդված՝ <<Արևմտահայերենի ուսուցումը պոլսահայ

արդի դպրոցէն ներս» և «Պոլսոյ «Քուլիս» եւ «Ակօս» պարբերաթերթերու «Լուցիքա Տուտու» սինակի խօսակցական արեւմտահայերէնի մասին»: Այժմ շարադրում է «Արդի արեւմտահայերէնի բայական խնդրառութիւնը» հոդվածը: Ավարտել է աշխատանքի առաջին գլուխը, երկրորդ գլուխը շարադրման փուլում է: Սարին Ագապաշը 2020–2021 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի հեռակա ասպիրանտ Սարին Ագապաշին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (հեռակա ուսուցում) **Հռիփսիմե Սուրենի Սարգսյանի** եզրափակիչ ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Թ. Տոնոյանը, Մ. Ֆելեքյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Հռիփսիմե Սարգսյանը 2017 թ. ընդունվել է ասպիրանտուրա (հեռակա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01):

Ատենախոսության թեմա է հաստատվել «Ժամանակակից հայերէնի բայի խոնարհման հարացույցը (ուսումնասիրության և ուսուցման հիմնախնդիրները հանրակրթական դպրոցում)» (Ժ.02.01 «Հայոց լեզու»), ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Յուրի Ավետիսյան: Հռիփսիմե Սարգսյանը 2019–2020 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը: Ավարտել է «Գիտության փիլիսոփայություն», «Մասնագիտական օտար լեզու (ակադեմիական գրագրություն)», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մանկավարժություն և հոգեբանություն» պարտադիր, «Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում» ընտրովի դասընթացները և ստացել է համապատասխան կրեդիտներ: Ուսումնասիրել է տեսական գրականությունը, հստակեցրել է աշխատանքի մեթոդաբանությունը, շարադրել է ատենախոսության մեծ մասը: «Գիտական Արցախ»-

ի №1(8), 2021 համարում տպագրել է «Անցյալ կատարյալ ժամանակաձևի ուսուցումը ՀՀ հանրակրթական դպրոցում» հոդվածը: Հաջորդը «Հրամայական եղանակի ուսումնասիրությունը և ուսուցումը» թեմայով է, որը մոտակա ամիսներին ևս կտպագրվի: Պարտադիր դասընթացներ և քննություններ՝ 30 անհրաժեշտ միավորից առկա է 22-ը, բացակայում է միայն մասնագիտական ավարտական քննությունը (8 միավոր): Ընտրովի դասընթացներ և ստուգարքներ՝ 20 անհրաժեշտ միավորից առկա է 28-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (հեռակա ուսուցում) Հռիփսիմե Սարգսյանին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Ստեփանյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ ասպիրանտ Ա. Ստեփանյանի ատենախոսության թեման է «Հեղինակային հայեցակարգը և սուրբգրային կանոնը հայ միջնադարյան քնարերգության մեջ», գիտական ղեկավարն է պրոֆ. Վ. Հ. Սաֆարյանը:

2017թ. դեկտեմբերի 27-ից մինչև 2021թ. մայիսի 13-ն ընկած ժամանակահատվածում ասպիրանտը զբաղվել է թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներով: Ուսումնասիրել է հայ միջնադարյան քնարերգությունը, աղբյուրագիտական և տեսական աշխատություններ:

2020 թվականի ընթացքում տպագրության է հանձնել թեմային վերաբերող ևս երկու հոդված: ԲՈԿ-ի կողմից սահմանված պարբերականներում տպագրվել են թեմային առնչվող երեք հոդվածներ, չորրորդը գտնվում է տպագրման ընթացքի մեջ: Հոդվածներն ունեն հետևյալ վերտառությունները՝ «Թեմատիկ և նկարագրական ընդհանրությունները 12-14-րդ դարերի հայ և ֆրանսիական քնարերգության մեջ», «Կյանքի ու մահվան, ազատության ու կամքի փիլիսոփայական խորհուրդը Հովհաննես

Սարկավագի «Բան իմաստութեան...» փիլիսոփայական պոեմում», «Վարդի և սոխակի մոտիվի ուշմիջնադարյան խորհրդանշանային ընկալումները», «Ստեղծագործելու շնորհի անհատական և կանոնական ընկալումների դրսևորումը հայ միջնադարյան քնարերգության մեջ», «Հեղինակի խնդիրը հայ միջնադարյան օրհներգության մեջ»: Հոդվածներն ընթերցվել են տարբեր գիտաժողովների ընթացքում: Առաջիկա ամիսների ընթացքում ևս մեկ գիտաժողովի շրջանակում ներկայացվելու է նոր զեկույց՝ «Հեղինակ-թարգմանչի դերը հայ միջնադարյան կաֆաներում» վերնագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայ գրականության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Ստեփանյանին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Հայկ Արարատի Հովհաննիսյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Բ. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, և Բ. գ. թ., դոցենտ Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ ասպիրանտ Հայկ Հովհաննիսյանը 2017 թվականին ընդունվել է հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրա ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնում ԲՈԿ-ի անվանացանկին համապատասխան «Հայ դասական գրականություն (Ժ. 01.01)» մասնագիտությամբ:

Թեկնածուական ատենախոսության թեման է «Զապել Եսայանի վիպաշխարհը»՝ Բ. գ. դ., պրոֆ. Ալբերտ Մակարյանի գիտական ղեկավարությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտը շարունակել է գիտահետազոտական աշխատանքների կատարումը, ուսումնասիրել է Ջ. Եսայանի՝ Սփյուռքում տպագրված հոդվածները և փոքրքրծավալ արձակը, ինչի արդյունքում տպագրության է պատրաստել ևս 2 գիտական հոդված.

1. «Ողբերգականն ու երգիծականը Ջ.Եսայանի «Կեղծ հանճարներ» վիպակում»,
2. «Ջ. Եսայանի նորավեպերը»:

Նախորդ կիսամյակներում ստացել է ասպիրանտի համար նախատեսված պարտադիր և կամընտրական դասընթացների կրեդիտները, պատրաստվում է մասնագիտական քննությունը հանձնել ընթացիկ կիսամյակում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել **Հայկ Արարատի Հովհաննիսյանին**:

ԼՍԵՑԻՆ - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Լևոն Օնիկի Ալոյանի** ատեստավորման հարցը ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ք. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, և ք. գ. թ., դոցենտ Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Լ. Ալոյանը 2018 թվականին ձևակերպվել է հայցորդ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության ամբիոնում ԲՈԿ-ի անվանացանկին համապատասխան «Հայ դասական գրականություն» (Ժ. 01. 01) մասնագիտությամբ (հրաման՝ 23 § 126, 07.02.2018թ.): Թեկնածուական ատենախոսության թեման է «Պատմության թեման արևմտահայ ռոմանտիկական արձակում»՝ ք. գ. դ., պրոֆ. Ալ. Ա. Մակարյանի գիտական ղեկավարությամբ: 2018-2019 ուսումնական տարում թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներին զուգընթաց հանձնել է կրեդիտային համակարգով նախատեսված պարտադիր առարկաներից բոլոր քննությունները: 2019 թ. մայիսին հանձնել է որակավորման քննություն «Ինֆորմատիկա» առարկայից: 2021 թ. ևս մեկ տարով երկարացրել է հայցորդությանս ժամկետը (հրաման՝ 33/12, 24.02.2021 թ.): Ընթացիկ տարում ուսումնասիրել է Ծերենցի պատմավեպերն ու հոդվածները, ժամանակաշրջանի գրական համապատկերը և մամուլը: Այժմ աշխատում է գիտական հոդվածների վրա, որոնցից առաջինը մոտ օրերս կհանձնի հրատարակության:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել **Լևոն Օնիկի Ալոյանին**:

ԼՍԵՑԻՆ - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հայցորդ **Գոհար Անուշավանի Պետրոսյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ք. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, և ք. գ. թ., դոցենտ Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Գ. Պետրոսյանը 2021 թվականին ձևակերպվել է հայցորդ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրականության պատմության ամբիոնում ԲՈԿ-ի անվանացանկին համապատասխան «Հայ դասական գրականություն» (Ժ. 01. 01) մասնագիտությամբ (հրաման՝ 27/73, 09.02.2021թ.): Թեկնածուական ատենախոսությանս թեման է «Հարություն Սըվաճյանի գրական ժառանգությունը»՝ ք. գ. դ., պրոֆ. Ալ. Ա. Մակարյանի գիտական ղեկավարությամբ:

2020-2021 ուսումնական տարում թեմայի հետ առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներին զուգընթաց հանձնել է կրեդիտային համակարգով նախատեսված պարտադիր առարկաներից քննությունները:

2021 թ. մայիսին հանձնել է որակավորման քննություն «Անգլերեն» առարկայից: Ընթացիկ տարում ուսումնասիրել է Սըվաճյանի ստեղծագործությունները և հողվածները: Այժմ ուսումնասիրում է Ժամանակաշրջանի գրական համապատկերը, մամուլը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ատեստավորել **Գոհար Անուշավանի Պետրոսյանին**:

ԼՄԵՑԻՆ - Հայ նորագույն գրականության ամբիոնի առաջին տարվա հայցորդ Արամ Աշոտի Խաչատրյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Արամ Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Գրական բանավեճերը Ժամանակակից հայ մամուլում (1990 – 2010 – ական թթ.)», գիտական ղեկավարն է բան. գիտ. թեմածու, դոցենտ Ս. Գրիգորյանը: 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում նա մասնակցել է պարտադիր և կամընտրական մի շարք դասընթացների՝ հանձնելով ստուգաբանները: Գիտական ղեկավարի հետ քննարկել է ատենախոսության նախնական ծրագիրը և, ըստ այդմ, սկսել անհրաժեշտ գրականության և հատկապես՝ մամուլի ուսումնասիրությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայ նորագույն գրականության ամբիոնի հայցորդ Արամ Խաչատրյանին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ - Հայ նորագույն գրականության ամբիոնի հեռակա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ Աստղիկ Արարատի Օհանյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, դոց. Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ Աստղիկ Օհանյանի թեկնածուական ատենախոսության թեման է «Հովհաննես Գրիգորյանի պոետիկան», գիտական ղեկավարն է բան. գիտ. թեկնածու, դոցենտ Ս. Գրիգորյանը: 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում նա մասնակցել է պարտադիր և կամընտրական մի շարք դասընթացների: Ատենախոսության թեմայի հետ կապված ուսումնասիրում է տեսական նյութեր և արխիվներ: Աշխատում է հոդվածի վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայ նորագույն գրականության ամբիոնի ասպիրանտ Աստղիկ Օհանյանին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության ամբիոնի հեռակա ասպիրանտ Հայկանուշ Գազիկի Սահակյանի ատեստավորման հարցը /թեմա՝ «Միջին հայերենի բայական համակարգի ձևավորումը և զարգացումը», գիտական ղեկավար՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆ. Աննա Հենրիկի Աբաջյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Նշվեց, 2020-2021 ուստարվա ընթացքում ասպիրանտը ծանոթացել է թեմայի հետ կապված տեսական գրականությանը, կատարել է որոշակի քարտազրումներ և հրատարակության է պատրաստել մեկ հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության ամբիոնի հեռակա ասպիրանտ Հայկանուշ Գազիկի Սահակյանին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի երրորդ տարվա հեռակա ասպիրանտ Նոանե Բարկենի Սարոյանի ատեստավորման հարցը

/թեմա՝ «Բանաստեղծական կայուն ձևերը 20-րդ դարի հայ պոեզիայում», գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոց. Ա. Ջրբաշյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. Ա. Ջրբաշյանը և ուրիշներ:

Նշվեց, 2020-2021 ուստարվա ընթացքում Սարոյանը տպագրության է ուղարկել 4 հոդված, որից մեկը տպագրվել է տարվա սկզբին, իսկ մյուսները կտպագրվեն տարեվերջին (ևս 4 հոդված տպագրվել է երկրորդ կուրսի ընթացքում): Գրել է նաև թեզի առաջին և երկրորդ գլուխները, որոնք նվիրված են սոնետներին և եվրոպական բանաստեղծության կայուն ձևերին: Այժմ խմբագրում է երրորդ գլուխը, որտեղ խոսվում է արևելյան պոեզիայի կայուն ձևերի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հեռակա ասպիրանտ Նոանե Բաբկենի Սարոյանին ատեստավորել:

ԼՄԵՑԻՆ – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի առաջին տարվա հեռակա հայցորդ Արա Սմբատի Ջարգարյանի ատեստավորման հարցը /թեմա՝ «Նախատիպի գեղարվեստականացման համակարգը Եղիշե Չարենցի ստեղծագործություններում», գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոց. Ա. Բեքմեզյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. Ա. Ջրբաշյանը և ուրիշներ:

Նշվեց, որ 2020-2021 ուստարվա ընթացքում Ջարգարյանը ուսումնասիրել է ատենախոսության թեմայի հետ կապված տեսական և գրականագիտական նյութեր, արխիվային փաստաթղթեր:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի առաջին տարվա հեռակա հայցորդ Արա Սմբատի Ջարգարյանին ատեստավորել:

Օրակարգի երրորդ հարցով լսեցին նոյեմբերի 3 – ից հեռավար ուսուցման անցնելու հետ կապված հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց., դոց. Վ. Պետրոսյանը, Թ. Տոնոյանը և ուրիշներ:

Գիտխորհրդի նախագահ պրոֆ. Ա. Ավագյանը ներկայացրեց, որ համավարակով պայմանավորված նոյեմբերի 3 – ից 15 – ը ԵՊՀ – ում դասերը անցկացվելու են հեռավար: Բոլոր դասախոսները դասերը պետք է անցկացնեն բացառապես e-learning համալսարանական հարթակում՝ ուսանողներին ապահովելով բոլոր անհրաժեշտ նյութերով:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ **ԼՍԵՑԻՆ** – Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Օհանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, դոց. Ա. Ջրբաշյանը և ուրիշներ:

Նշվեց, որ նպատակահարմար է Օհանյանին ատենախոսության թեմա առաջարկել «Հայ ռոմանտիկական վեպի կառուցվածքային առանձնահատկությունները», քանի որ հայ ռոմանտիկական վեպը կառուցվածքաբանական տեսանկյունից ուսումնասիրված չէ, այն կարոտ է նաև ընդհանուր տիպաբանական վերլուծության՝ եվրոպական ռոմանտիկական վիպասանության համադրությամբ: Նշվեց, որ թեման արդիական է, համապատասխանում է ժամանակակից գրականագիտության պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Օհանյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հայ ռոմանտիկական վեպի կառուցվածքային առանձնահատկությունները»՝ Ժ 01. 04 - «Գրականության տեսություն» մասնագիտության գծով:

2. Ատենախոսության գիտական ղեկավար հաստատել բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշխեն Ջրբաշյանին:

բ/**ԼՍԵՑԻՆ** - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի ամբիոնի նախկին հայցորդ, բ. գ. թ. **Տարևիկ Հայկի Մերջանյանի**՝ «Կյանքի և

մահվան խնդիրը Նար-Դոսի երկերում» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – ք. գ. դ., պրոֆեսորներ Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Ժ. Քալանթարյանը, Վ. Սաֆարյանը, և ք. գ. թ., դոցենտ Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ մենագրության երեք գլուխներում քննվում է կյանքի և մահվան խնդիրը: Ուսումնասիրությունը նոր և թարմ խոսք է նարդոսագիտության մեջ. այն բացահայտում է մինչ օրս ստվերում մնացած մի շարք խնդիրներ: Գրքի հրատարակությունը կնպաստի և՛ նարդոսագիտության, և՛ հայ գրականության հետագա ուսումնասիրմանն ու զարգացմանը: Գրքի հրատարակությունը նշանավորվում է նրանով, որն այն նվիրվում է արձակագրի ծննդյան 155 - ամյակին:

Մենագրության խմբագիրն է ք. գ. դ., պրոֆ. Ալ. Մակարյանը, գրախոսները՝ ք. գ. դ., պրոֆեսորներ Ս. Մուրադյանը և Վ. Սաֆարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.– Բ. գ. թ. Տաթևիկ Մերջանյանի «Կյանքի և մահվան խնդիրը Նար-Դոսի երկերում» մենագրությունը երաշխավորել տպագրության:

գ/ **ԼՍԵՑԻՆ** - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) Հաջար Ռեզայի Մոմենիի ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Ա. Ավագյանը, պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. Լ. Թեյյանը, դոց. Ա. Սարգսյանը, դոց. Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Հաջար Մոմենիին ԵՊՀ-ի և Սպահանի (Իրանի) համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում 2020 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Ատենախոսության թեմա է հաստատվել «Իրանական փոխառությունների իմաստակառուցվածքային զարգացումը հայերենում» (Ժ.02.01 «Հայոց լեզու»):

Հաշվի առնելով թեմայի մեծ ծավալը, ընդգրկուն լինելը՝ ամբիոնը նպատակահարմար է գտնում փոփոխել Հաջար Մոմենիի ատենախոսության թեման:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) Հաջար Ռեզայի Մոմենիի ատենախոսության թեմա հաստատել «Սոմանտիկ դարձվածքները պարսկերենում և հայերենում (իմաստակառուցվածքային և մշակութաբանական քննություն)» (Ժ.02.01 «Հայոց լեզու»):

դ/ **ԼՍԵՑԻՆ** – Հայոց լեզվի ամբիոնի դոցենտ Լիանա Սարգսյանի <<Երվանդ Օտյանի երգիծանքի խոսքարվեստը>> գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Թ. Տոնոյանը, Մ. Ֆելեքյանը և ուրիշներ:

Նշվեց, որ գիրքը արդիական է և արժեքավոր քննվող հարցերի շրջանակով ու վերլուծություններով, կարևոր նշանակություն ունի ոճագիտության, մասնավորապես երգիծանքի լեզվական միջոցների քննության առումով, քանի որ երգիծանքին վերաբերող լեզվական ուսումնասիրություններ մեզանում գրեթե չկան: Քննության առումով Ե. Օտյանի գեղարվեստական արձակը հեղինակին տվել է լայն հնարավորություններ երգիծանքի տարբեր ձևերի լեզվական արտահայտությունները վերհանելու, և գրքի հստակ կառուցվածքը դրա վկայությունն է: Գիրքը օգտակար կարող է լինել ոճագիտության հարցերով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն շրջանակների համար: Գրքի խմբագիրն է Բ. Գ. Թ., պրոֆ. Յուրի Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հիմք ընդունելով նիստի մասնակիցների կարծիքները՝ դոց. Լ. Սարգսյանի <<Երվանդ Օտյանի երգիծանքի խոսքարվեստը>> գիրքը երաշխավորել տպագրության:

ե/ **ԼՍԵՑԻՆ** - <<Հայոց լեզու և խոսքի մշակույթ>> (բուհերի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների համար) ձեռնարկը որպես դասագիրք երաշխավորելու հարցը: Հեղինակներն են՝ պրոֆ. Յու. Ավետիսյան, դոց. դոց. Գ. Ներսեսյան, Շ. Գևորգյան և ասիստ. Մ. Գաբրիելյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Ա. Տեր-Մինասյանը, Մ. Ֆելեքյանը, Թ. Տոնոյանը, Լ. Սարգսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» ձեռնարկը արդեն երկու տարի հաջողությամբ գործածվում է որպես դասագիրք համալսարանի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետներում: Ձեռնարկի տեսական հատվածը շարադրված է արդեն հրատարակված նույնանուն դասագրքի հիման վրա, սակայն վերլուծությունները, բերված օրինակները բնագիտական ուղղվածության են: Տեսական նյութին զուգահեռ՝ ձեռնարկում զետեղված են առաջադրանքներ և վարժություններ, որոնք առավել արդյունավետ կարող են դարձնել նյութի մատուցումը և յուրացված գիտելիքների ամրապնդումը: Գործնական առաջադրանքները հնարավորություն են ստեղծում, որ ուսանողներն ինքնուրույն աշխատանք կատարեն, նյութը խորությամբ ըմբռնեն:

Տեսական հատվածի շարադրանքը և նյութի մատուցման խորությունը մասնագիտական պատշաճ մակարդակով են կատարված, վարժություններն ու առաջադրանքները լավագույնս կարող են նպաստել ուսանողների խոսքի մշակույթի զարգացմանը: Դասագիրքը ուսումնառության ընթացքում կօգնի տիրապետելու խոսքային հաղորդակցման հմտություններին, ձեռք բերելու մասնագիտական կարողություններ, իսկ հետագայում՝ դրանք հաջողությամբ կիրառելու նաև աշխատանքային գործունեության մեջ: Գրքի խմբագիրն է Բ. Գ. Թ., պրոֆ. Յուրի Ավետիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» ձեռնարկը որպես դասագիրք երաշխավորել բուհերի բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ